ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 75 -Ն** «03» հուլիսի **2023 թ.**

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ և 11-րդ դասարանների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

7/3/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի հուլիսի 3-ի

N 75-Ն հրամանի

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐ

## 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

<table>
<tr><td colspan="2">ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td colspan="2">ՆԶՊ-Ի ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Ծանոթացնել աշակերտներին ՆԶՊ առարկայի էությանը, նպատակներին և խնդիրներին:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1. Գիտակցի ՆԶՊ առարկայի կարևորությունը հանրակրթական դպրոցում:<br>2. Ներկայացնի ՆԶՊ առարկայի նպատակն ու խնդիրները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ Սահմանադրությունը զինված ուժերի մասին, Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին օրենքը: ՆԶՊ ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (Դասարանական-ուսումնական դասակի, ջոկերի կազմավորում և հրամանատարների ընտրություն):</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
</table>

<table>
<tr><td>1.Ինքնուրույն (խմբով) համացանցի միջոցով ուսումնասիրում են «ՀՀ Սահմանադրությունը զինված ուժերի մասին, Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքները:<br>2.Ներկայացնում են ՆԶՊ ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը:</td><td>Համակարգ և մոդել<br>Դասարանը որպես ուսումնական համակարգ՝ իր ենթակառուցվածքներով /ջոկ, դասակ/</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1.Հայոց լեզու: Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2.Հասարակագիտություն: Հասարակական փոխհարաբերություններ: Իրավունքներ և պարտականություններ: Պատասխանատվություն:</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Հ15, Հ22, Հ35, Հ41, Հ50</td></tr>
<tr><td colspan="2" align="center">ԹԵՄԱ 1.1</td></tr>
<tr><td colspan="2" align="center">ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1.Ծանոթացնել ռազմարվեստ հասկացությանը և ելակետային դրույթներին:<br>2.Ուսուցանել  զենքի և զինամթերքի ստեղծման ու զարգացման պատմությանը:</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1. Գիտի ռազմարվեստ հասկացությունը և ելակետային դրույթները:<br>2. Ներկայացնի զենքի և զինամթերքի ստեղծման ու զարգացման պատմությունը:</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">1. Ռազմարվեստ:<br>2. Զենքի և զինամթերքի ստեղծումն ու զարգացումը:</td></tr>
<tr><td align="center">Առաջարկվող գործունեության ձևեր</td><td align="center">Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>1.Ինքնուրույն (խմբով) համացանցի միջոցով ուսումնասիրում են ռազմարվեստի պատմության, զենքի և զինամթերքի ստեղծման ու զարգացման վերաբերյալ նյութեր:<br>2.Համակարգում են դրանք և ներկայացնում դասարանին:</td><td>1. Ժամանակ և տարածություն<br>1) Ռազմարվեստի, զենքի և զինամթերքի ստեղծումն ու զարգացումը (ժամանակով պայմանավորված.<br>հին դարաշրջանից՝ մեր օրեր):<br>2. Կառուցվածք և գործառույթ<br>1) Զենքի և զինամթերքի մասերն ու մեխանիզմները:</td></tr>
</table>

| Միջառարկայական կապեր |
|---|
| 1. **Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն:** Զենքի և զինամթերքի ստեղծման ու զարգացման պատմություն, զինագործներ:<br>2. **Ինֆորմատիկա:** Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:<br>3. **Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:<br>4. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ3, Հ10, Հ18, Հ24, Հ44, Հ45 |
| **ԹԵՄԱ 2.1** |
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ՄԱՐՏ** |
| **Հիմնական նպատակը** |
| 1. Ծանոթացնել՝<br>1) ՀՀ ԶՈՒ կառուցվածքին, զորատեսակներին, ստորաբաժանման կառուցվածքային միավորներին,<br>2) ՄՀՋ-ի (ՀՋ) կազմը, սպառազինությունը:<br>2. Ուսուցանել ժամանակակից համազորային մարտը, նրա բնութագիրը, հիմնական սկզբունքները, տեսակները: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1.*Նկարագրի* ՀՀ ԶՈՒ ընդհանուր կառուցվածքը և *ներկայացնի* զորատեսակները:<br>2.*Նկարագրի* ստորաբաժանումների կառուցվածքային միավորները և *թվարկի* դրանց անվանումները, մեկնաբանի տարբերությունները:<br>3.*Բացատրի* աշխարհազորի, կամավորականների և մոբիլ ջոկատների նշանակությունը մարտական գործողությունների ժամանակ:<br>4.*Բացատրի* մարտ հասկացությունը և *տարբերի* ՛ժամանակակից համազորային՚ մարտը մարտի մյուս տեսակներից:<br>5.*Նկարագրի* մարտի հիմնական սկզբունքները և տեսակները՝ ցույց տալով տեսակային տարբերությունները:<br>6.*Բացատրի* հրաձգային ջոկի և մոտոհրաձգային ջոկի ընդհանրություններն ու տարբերությունները:<br>7.*Նկարագրի* հրաձգային և մոտոհրաձգային ջոկերի կազմն ու սպառազինությունը: |
| **Բովանդակություն** |
| 1. ՀՀ ԶՈՒ կառուցվածքը: Զորատեսակներ, ստորաբաժանման կառուցվածքային միավորները (ջոկ /անձնակազմ, հաշվարկ/ դասակ, վաշտ /մարտկոց/, գումարտակ (դիվիզիոն): Աշխարհազոր, կամավորական և մոբիլ ջոկատներ:<br>2. Մարտ: Ժամանակակից համազորային մարտը, բնութագիրը, հիմնական սկզբունքները, տեսակները:<br>3. ՄՀՋ-ն (ՀՋ) որպես ՀՀ ԶՈւ կառուցվածքային սկզբնական միավոր: ՄՀՋ-ի (ՀՋ) կազմը, սպառազինությունը: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. Դասարանին են ներկայացնում ՀՀ ԶՈՒ կառուցվածքը, զորատեսակները, ստորաբաժանումների կառուցվածքային միավորները:<br>2. Սահմանում են համազորային մարտը: | **Համակարգ և մոդել**<br>ՀՀ ԶՈՒ համակարգը՝ իր ենթակառուցվածքներով /ստորաբաժանումներով/ |
| **Միջառարկայական կապեր** | |
| 1. **Հայոց պատմություն:** Աշխարհազոր, կամավորական ջոկատներ:<br>2. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Հ2,Հ27 | |
| **ԹԵՄԱ 2.2** | |
| **ԶԻՆՎՈՐ: ԶԻՆՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ: ՖԻԶԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԶՈՒՄ:** | |
| **Հիմնական նպատակը** | |
| 1. Ուսուցանել զինվորի պարտականությունները մարտում:<br>2. Մարզել անհրաժեշտ ֆիզիկական ընդունակությունները: | |
| **Վերջնարդյունքներ** | |
| 1.*Գիտի* ով է զինվորը և թվարկի զինվորի պարտականությունները մարտի ընթացքում:<br>2.Մարտում հետիոտն գործողությունները արդյունավետ կատարելու նպատակով՝ *տիրապետի* անհրաժեշտ ֆիզիոլոգիական որակներին՝ մկանային ուժին, արագաշարժությանը, դիմացկունությանը, ճարպկությանը, ճկունությանը, ցատկունակությանը, կոորդինացիաին և հավասարակշռությանը: | |
| **Բովանդակություն** | |
| 1.Զինվոր: Զինվորի պարտականությունները մարտի ընթացքում:<br>2.Մարտում հետիոտն գործողությունները արդյունավետ կատարելու նպատակով անհրաժեշտ ֆիզիկական ընդունակությունների որակների (մկանային ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն, ցատկունակություն, կոորդինացիա, հավասարակշռություն) մարզում: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| Համաձայն զինվորական ղեկավարի կողմից տրված հրահանգների կատարում են տեղաշարժեր: | **1. Կառուցվածք և գործառույթ** |

<table>
<tr><td></td><td>1) Զինվորի գործողությունների փոփոխությունը հանգեցնում է կառուցվածքային փոփոխությունների. ֆիզիոլոգիական որակների<br>**2. Ժամանակ և տարածություն**<br>1) Տեղաշարժ տեղանքում (ժամանակով և տարածությամբ պայմանավորված):</td></tr>
<tr><td colspan="2">**Միջառարկայական կապեր**</td></tr>
<tr><td colspan="2">1. **Ֆիզկուլտուրա:** Ֆիզիկական որակներ՝ մկանային ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն, ցատկունակություն, կոորդինացիա, հավասարակշռություն:<br>2. **Ֆիզիկա:** Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա:<br>3. **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):</td></tr>
<tr><td colspan="2">**Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**</td></tr>
<tr><td colspan="2">Հ27, Հ33, Հ47, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">**ԹԵՄԱ 2.3**</td></tr>
<tr><td colspan="2">**ՄԱՐՏՈՒՄ ԶԻՆՎՈՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՁԵՎԵՐԸ**</td></tr>
<tr><td colspan="2">**Հիմնական նպատակը**</td></tr>
<tr><td colspan="2">Մարզել տեղանքում տեղաշարժման ձևերը:</td></tr>
<tr><td colspan="2">**Վերջնարդյունքներ**</td></tr>
<tr><td colspan="2">*Կատարի* գլորումներ (աջ, ձախ), անցումներ (վազեվազք և կիսաչորեքթաթ), սողանցումներ (փորսող և կողքի), քողարկված տեղաշարժ մարտի դաշտում, քողարկված սողեսող տեղաշարժ (առաջ, հետ, աջ և ձախ):</td></tr>
<tr><td colspan="2">**Բովանդակություն**</td></tr>
<tr><td colspan="2">1.Գլորումներ (աջ, ձախ): Անցումներ (վազեվազք և կիսաչորեքթաթ): Սողանցումներ (փորսող և կողքի):<br>2.Քողարկված տեղաշարժ՝ մարտի դաշտում, քողարկված սողեսող տեղաշարժ (առաջ, հետ, աջ և ձախ):</td></tr>
<tr><td>**Առաջարկվող գործունեության ձևեր**</td><td>**Խաչվող հասկացություններ**</td></tr>
<tr><td>Համաձայն զինվորական ղեկավարի կողմից տրված հրահանգների կատարում են տեղաշարժեր:</td><td>**1. Կառուցվածք և գործառույթ**<br>1) Զինվորի գործողությունների փոփոխությունը հանգեցնում է կառուցվածքային</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td>փոփոխությունների. ֆիզիոլոգիական որակների<br>2. Ժամանակ և տարածություն<br>1) Տեղաշարժ տեղանքում (ժամանակով և տարածությամբ պայմանավորված):</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ մկանային ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն, ցատկունակություն, կոորդինացիա, հավասարակշռություն:<br>2. Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա:<br>3. Կենսաբանություն: Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ27, Հ33, Հ47, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 3.1</td></tr>
<tr><td colspan="2">ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ծանոթացնել մարտական պատրաստության գործընթացում կրակային պատրաստության դերն ու տեղը:<br>2. Ուսուցանել զենքի հետ վարվելու անվտանգության կանոններին:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1. Գիտի կրակային պատրաստության դերն ու տեղը մարտական պատրաստության գործընթացում:<br>2. Ներկայացնի անվտանգության կանոնները պարապմունքների և հրաձգության ժամանակ:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">Հրաձգային զենքը, դրա նշանակությունը և դասակարգումը:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>Պատրաստում են հրաձգային զենքի վերաբերյալ սահիկաշար և նեկայացնում դասարանին:</td><td>Կառուցվածք և գործառույթ<br>Հրաձգային զենքի մասերն ու մեխանիզմները:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| 2. **Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:<br>3. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Հ3, Հ12, Հ13, Հ29, Հ30 | |
| **ԹԵՄԱ3.2** | |
| **ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՀՐԱՑԱՆԻՑ** | |
| **Հիմնական նպատակը** | |
| 1. Ձևավորել՝<br>1) պատկերացումներ հրաձգության կանոնների տիրապետման վերաբերյալ,<br>2) պատկերացումներ հրաձգության ժամանակ օդամղիչ հրացանի հնարավոր խափանումների և դրանք տեղում վերացնելու վերաբերյալ,<br>3) օդամղիչ հրացանից օգվելու կարողություններ հրաձգության վարժություններ կատարելու համար: | |
| **Վերջնարդյունքներ** | |
| 1. *Ներկայացնի* անվտանգության կանոնները հրաձգության ժամանակ:<br>2. *Ծանոթանա* հրաձգության կանոններին:<br>3. *Լիցքավորի* օդամղիչ հրացանը:<br>4. *Ընդունի* կրակ վարելու հիմնական դիրքը:<br>5. *Ճիշտ նշանառությամբ կրակ վարի.* անշարժ նշանակետի վրա:<br>6. *Ստուգի և վերացնի* հրաձգության ժամանակ ի հայտ եկած (պայմանական) խափանումները: | |
| **Բովանդակություն** | |
| 1.Զենքի հետ վարվելու անվտանգության կանոնների հրահանգավորում: Նշանառման կարգը և կրակվարման հիմնական դիրքերը:<br>2.Մարտական հրադրության ժամանակ (հետիոտն կարգով) հրաձգության կայուն և փոփոխական դրությունների (դիրքավորումների) տարրերի մարզում: (Ֆիզիկական պատրաստություն):<br>3.Նշանառության մարզումը փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի կիրառմամբ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. Դասարանին ներկայացնում են հրաձգության ժամանակ անվտանգության կանոնները:<br>2. Լիցքավորում են օդամղիչ հրացանը: Ընդունում են կրակ վարելու դիրքը: | **1. Կառուցվածք և գործառույթ**<br>1) Օդամղիչ հրացանից կրակ վարելու դիրք:<br>2) Ճիշտ նշանառությամբ հրաձգության վարում: |

| | |
|---|---|
| 3. Կատարում են ճիշտ նշանառության վարժանք:Վարում են հրաձգություն անշարժ թիրախի վրա:<br>4. Վերացնում են օդամղիչ հրացանի (պայմանական) խափանումը: | |
| **Միջառարկայական կապեր** | |
| 1. **Ֆիզկուլտուրա:** Ֆիզիկական որակներ՝ մկանային ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն, ցատկունակություն, կոորդինացիա, հավասարակշռություն:<br>2. **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):<br>3. **Ֆիզիկա:** Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Աչքի ֆոկուս: Հետհարվածի դիմակայում: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Հ6, Հ26, Հ46, Հ47, Հ50 | |
| **ԹԵՄԱ 4.1** | |
| **ՏԵՂԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ** | |
| **Հիմնական նպատակը** | |
| Ծանոթացնել տեղանքի, նրա տարատեսակների, մարտական հատկանիշների, ռելիեֆի մասին: | |
| **Վերջնարդյունքներ** | |
| *Իմանա և բացատրի* ինչ է ռելիեֆը, տեղանքի մարտավարական հատկանիշները: | |
| **Բովանդակություն** | |
| Տեղանքի ռելիեֆը, առարկաները, տեսակներն ու դրանց մարտավարկան հատկանիշները: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| Իրականացնում են տեղանքի տեսակների դիտարկում, ռելիեֆի նկարագրում, բնական և արհեստական առարկաների թվարկում: | **Մասշտաբ, համամասնություն, քանակ**<br>Բացարձակ և հարաբերական բարձրություններ, լանջերիթեքություններ: |
| **Միջառարկայական կապեր** | |
| 1. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2. **Ես և շրջակա աշխարհը:** Տեղանք: Հարթավայրեր, լեռներ, ժայռեր, թփուտներ, անտառներ, անապատներ, ճահիճներ, լեռնանտառային տեղանք: | |

<table>
<tr><td colspan="2">3. Բնագիտություն: Աշխարհագրություն:Տեղանքի տեսակներ: Ռելիեֆ: Բնական և արհեստական առարկաներ, լեռներ, ժայռեր, կիրճեր, ձորեր, անտառաթփուտային վայրեր, կտրտվածություն և անցանելիություն: Տեղանքի մարտավարական հատկանիշներ:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ4, Հ5, Հ9, Հ46, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 4.2</td></tr>
<tr><td colspan="2">ԱՌԱՆՑ ՔԱՐՏԵԶԻ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼԸ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ուսուցանել՝<br>1) հորիզոնի կողմերը,<br>2) երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով հորիզոնի կողմերի որոշման կարգը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1. Նկարագրի հորիզոնի կողմերը:<br>2.Որոշի հորիզոնի կողմերը կողմնացույցով, երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">1.Հորիզոնի կողմերի որոշումը երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով:<br>2.Կողմնացույց:  Հորիզոնի կողմերի որոշումը կողմնացույցի օգնությամբ:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>Զինվորական ղեկավարի ցուցումով դպրոցի բակում (տեղանքում) տարբեր եղանակներով որոշում են հորիզոնի կողմերը:</td><td>1. Օրինաչափություն<br>1) Տարվա եղանակների փոփոխություն /գարուն, ամառ, աշուն, ձմեռ/,<br>2) բնության մեջ տեղի ունեցող երևույթներ /գիշեր-ցերեկ(երկնային լուսատուներ՝ արև, լուսին, աստղեր), անձրև-ձյուն (սառույց, վտակներ), բուսականություն (խոտածածկույթի, թփերի, ծառերի աճ):<br>2. Պատճառ և հետևանք</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td>1) Բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները ազդում են տեղանքի վրա, որի հետևանքով փոփոխվում են նաև բնական միջոցները:<br>3. Զարգացում<br>1) Տեղանքի առարկաների գործառույթների փոփոխությունը դիտարկել զարգացման գործընթացի համատեքստում:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հայոց լեզու: Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ:<br>2. Ես և շրջակա աշխարհը: Տեղանք: Հարթավայրեր, լեռներ, ժայռեր, թփուտներ, անտառներ, անապատներ, ճահիճներ, լեռնանտառային տեղանք:<br>3. Բնագիտություն: Տեղանքի տեսակներ: Ռելիեֆ: Բնական և արհեստական առարկաներ, լեռներ, ժայռեր, կիրճեր, ձորեր, անտառաթփուտային վայրեր, կտրտվածություն և անցանելիություն:<br>4. Աշխարհագրություն: Կողմնորոշում տեղանքում երկնային լուսատուների, տեղանքի առարկաների և կողմնացույցի միջոցով:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ4, Հ5, Հ9, Հ46, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 5.1</td></tr>
<tr><td colspan="2">ՇԱՐՔ: ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ: ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՏԵՂՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ծանոթացնել ՀՀ ԶՈւ շարային կանոնադրության ընդհանուր դրույթներին:<br>2. Ուսուցանել՝<br>1) շարվելուց առաջ և շարքում զինվորի պարտականությունները:<br>2) տեղում դարձումներ կատարելու տարրերը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1.Իմանա և բացատրի ինչ է շարքը, ինչ է տողանը, ինչ է շարասյունը:<br>2.Տա նախնական և կատարողական հրամանները,<br>3.Իմանա և բացատրի ինչպես է կատարվում տեղում քայլով մարշը:<br>4.Կատարի. դարձումները տեղում:</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">Շարք: Շարային կեցվածք: Շարային վարժաձևերն ու շարժումները տեղում՝ առանց զենքի:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>Ցուցադրել շարային վարժաձևերը՝ տեղում առանց զենքի շարային վարժաձևերի կատարումը:</td><td>1. Պատճառ և հետևանք<br>1) Նախնական և կատարողական հրամաններ:<br>2. Անհատ և հարաբերություններ<br>1) Զինվորական համախմբվածություն, համատեղ գործողությունների կատարում.<br>պետեր և ենթականեր, ավագներ և կրտսերներ:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հայոց լեզու: Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2. Ֆիզկուլտուրա: Շարային պատրաստության վարժաձևեր. շարային քայլ, վազք, շարային կեցվածք:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ33, Հ47</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 6.1</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԶՈՒ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ձևավորել պատկերացումներ ՀՀ պետական խորհրդանշանների նշանակության և կարևորության վերաբերյալ:<br>2. Ծանոթացնել ՀՀ ԶՈՒ զինանշանի խորհրդին:<br>3. Ուսուցանել զորամասի մարտական դրոշի դերն ու նշանակությունը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1. Ներկայացնի ՀՀ պետական խորհրդանշանները:<br>2. Կատարի ՀՀ պետական օրհներգը:<br>3. Իմանա և բացատրի ՀՀ ԶՈՒ զինանշանի պատկերները:<br>4. Կատարի ՀՀ բանակի երգը:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ պետական օրհներգը: ՀՀ պետական զինանշանը: ՀՀ պետական դրոշը: ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զորամասի մարտական դրոշը: Բանակի երգը:</td></tr>
</table>

<table>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>1. Կատարում են ՀՀ պետական օրհներգը:<br>2. Դասարանին են ներկայացնում ՀՀ պետական զինանշանի և դրոշի տարրերի նշանակությունն ու խորհուրդը:<br>3. Բացատրում են ՀՀ ԶՈՒ զինանշանի խորհուրդը:<br>4. Կատարում են ՀՀ բանակի երգը:</td><td>1. Օրինաչափություն<br>2) ՀՀ պետական եվ ԶՈՒ խորհրդանշաններ:<br>2. Անհատական և մշակութային արժեհամակարգ<br>3) Զինվորի՝ իր մշակութային արժեքների կարևորում / ՀՀ պետական օրհներգ, ՀՀ բանակի երգ /:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">1. Հայոց պատմություն: Կերպարվեստ: ՀՀ պետական եվ ԶՈՒ խորհրդանշաններ և պատկերներ:<br>2. Երաժշտություն: ՀՀ պետական օրհներգ, ՀՀ բանակի երգ:</td></tr>
<tr><th colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</th></tr>
<tr><td colspan="2" align="center">Հ31, Հ42</td></tr>
<tr><th colspan="2">ԹԵՄԱ 6.2</th></tr>
<tr><th colspan="2">ՀՀ ԶՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ: ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐ: ՊԵՏԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՆԵՐ</th></tr>
<tr><th colspan="2">Հիմնական նպատակը</th></tr>
<tr><td colspan="2">1. Ձևավորել՝<br>1) պատկերացումներ զինվորական կոչումների, դրանց տարբերանշանների վերաբերյալ,<br>2) պատկերացումներ պետեր և ենթականեր հասկացությունների վերաբերյալ:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td colspan="2">1. Գիտի ում են շնորհվում զինվորական կոչումները, ինչպե՞ս է շնորհվում դրանք, ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունեն պետերը զինծառայողների նկատմամբ:<br>2. Տարբերում է պետեր-ենթականեր, ավագներ-կրտսերներ ըստ պաշտոնների և կոչումների:<br>3. Սահմանի ի՞նչ է հրամանը և ի՞նչ է կարգադրությունը:<br>4. Թվարկի և ներկայացնի՝<br>1) զինվորական կոչումները,<br>2) ենթակաների իրավունքներն ու պարտականությունները:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">ՀՀ զինված ուժերի զինվորական կոչումներ: Տարբերանշաններ: Պետեր եվ ենթականեր:</td></tr>
</table>

<table>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>1. Թվարկում և ներկայացնում են զինվորական կոչումները, ենթակաների իրավունքներն ու պարտականությունները:<br>2. Զինվորական ղեկավարը ներկայացնում է տարբեր պաշտոններով և զինվորական կոչումներով անձանց վերաբերյալ տվյալներ, իսկ սովորողները որոշում են դրանցից ո՞վ է պետ և ո՞վ ենթակա, ո՞վ է ավագ և ո՞վ՝ կրտսեր:</td><td>1. Պատճառ և հետևանք<br>1) ՀՀ ԶՈՒ: Զբաղեցրած հաստիքներ: ՀՀ զինված ուժերի զինվորական կոչումներ: Տարբերանշաններ:<br>2. Անհատ և հարաբերություններ<br>1) Պետեր և ենթականեր, ավագներ և կրտսերներ /իրավունքներն ու պարտականությունները/:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">1. Հասարակագիտություն: Հասարակական փոխհարաբերություններ: Իրավունքներ և պարտականություններ:<br>2. Կերպարվեստ: ՀՀ ԶՈՒ կոչումների պատկերներ:</td></tr>
<tr><th colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</th></tr>
<tr><td colspan="2" align="center">Հ5, Հ31, Հ39, Հ40</td></tr>
<tr><th colspan="2">ԹԵՄԱ 7.1</th></tr>
<tr><th colspan="2">ԱՆՁ, ՔԱՂԱՔԱՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</th></tr>
<tr><th colspan="2">Հիմնական նպատակը</th></tr>
<tr><td colspan="2">1. Ձևավորել՝<br>1) պատկերացումներ անձի, քաղաքացու եվ հասարակության վերաբերյալ,<br>2) հայրենասիրական դիրքորոշում և վարքագիծ:<br>2. Զարգացնել հասարական գիտակցությունը:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td colspan="2">1.Գիտի անձի, քաղաքացու և հասարակության տարբերությունը:<br>2.Ունի սեփական դիրքորոշում «Հայրենիք» հասկացության վերաբերյալ:<br>3.Կարևորի իր էթնիկական ինքնությունը:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակություն</th></tr>
<tr><td colspan="2">Հասարակական գիտակցություն: Արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ: Հայ զինվորականի վարքականոնը: Էթնիկական ինքնություն:</td></tr>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
</table>

<table>
<tr><td>Զրույց զինվորական հոգեբանի (զինվորական ղեկավար) հետ:</td><td>1. Անհատ և հարաբերություններ<br>1) Հրամանատար /հոգեբան/ զինվոր համագործակցություն /զրույց. անձի, քաղաքացու և հասարակության վերաբերյալ/:<br>2. Անհատական և մշակութային արժեհամակարգ<br>1) Զինվորի՝ իր էթնիկական ինքնության փոխամցումը մյուսներին /ավանդույթներ և այլն/:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հասարակագիտություն: Հասարակական փոխհարաբերություններ: Իրավունքներ և պարտականություններ:<br>2. Հայոց պատմություն: Տարբեր ժամանակների հայ զինվորի վարքականոնը:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ22, Հ40, Հ45</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 8.1</td></tr>
<tr><td colspan="2">ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ: ՎՏԱՆԳ, ՌԻՍԿ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Ուսուցանել արտակարգ իրավիճակներում ճիշտ գնահատումը ՝ հաշվի առնելով վտանգներն ու դրանցով պայմանավորված ռիսկերն ու խոցելիությունը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1.Գիտի վտանգավոր երևույթները և կարող է նկարագրել դրանք:<br>2.Ծանոթ է վտանգավոր երևույթների ազդեցություններին:<br>3.Ներկայացնի արտակարգ իրավիճակների կանխման, դրանց ազդեցության մեղմացման կամ հետևանքների վերացման միջոցառումները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">Արտակարգ իրավիճակ: Արտակարգ իրավիճակների դասակարգումը: Վտանգ: Ռիսկ: Խոցելիություն:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>1. Համացանցի միջոցով դիտում են տեսաֆիլմ՝ տարատեսակ արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Համակարգում են դրանք և ներկայացնում դասարանին:</td><td>1. Օրինաչափություն<br>1) Տարատեսակ արտակարգ իրավիճակներ:<br>2. Պատճառ և հետևանք</td></tr>
</table>

<table>
<tr><td>2. Դասարանում կազմակերպում են քննարկում:</td><td>1) Վտանգ: Ռիսկ: Խոցելիություն: Ֆիզիկական և նյութական կորուստ:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:<br>2. Ռուսերեն (այլ օտար լեզու): Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:<br>3. Բնագիտություն, Աշխարհագրություն: Բնական պայմաններ:Երկրակեղևի կառուցվածք: Երկրաշարժեր, սողանքներ, քարաթափումներ: Մթնոլորտային տեղումներ. սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձյունահյուսեր:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ3, Հ12, Հ13, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 8.2</td></tr>
<tr><td colspan="2">ԲՆԱԾԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ: ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ուսուցանել՝<br>1) ճիշտ արձագանքման կարգը բնածին արտակարգ իրավիճակներում,<br>2) բնածին արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ գործելու կարգը,<br>3) բնածին արտակարգ իրավիճակներում կենդանի և անվնաս մնալու կարգը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1.Գիտի բնածին արտակարգ իրավիճակները և նկարագրի դրանք:<br>2.Ծանոթ է բնածին արտակարգ իրավիճակների ժամանակ հնարավոր վտանգներին:<br>3.Գիտի բնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">1.Երկրաշարժեր, անտառային հրդեհներ, սողանքներ, փլուզումներ, քարաթափումներ: Սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձնահյուսեր:<br>2.Համաճարակ: Բնակչության վարքի կանոնները բնածին արտակարգ իրավիճակներում:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>1. Համացանցի միջոցով դիտում են տեսաֆիլմ՝ բնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Դասարանում կազմակերպում են քննարկում:</td><td>1. Օրինաչափություն<br>1) Բնածին արտակարգ իրավիճակներ:<br>2. Պատճառ և հետևանք</td></tr>
</table>

<table>
<tr><td>2. Դպրոցում իրականացնում են ուսումնական տագնապ և անձնակազմի տարահանում ՝ պայմանական (բնածին արտակարգ իրավիճակների) սցենարներով:<br>3. Ստանում են նախնական հրահանգավորում. գործառույթների բաշխում, տարահանում, արդյունքների վերլուծում և առաջնորդվում են ըստ կարգի ու համապատասխան ցուցումների:</td><td>1) Աղետներ, բնածին արտակարգ իրավիճակներ (երկրաշարժեր, անտառային հրդեհներ, սողանքներ, փլուզումներ, քարաթափումներ: Սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձնահյուսեր):<br>2) Ֆիզիկական և նյութական կորուստ:<br>3) Վարքի կանոններ:<br>4) Տարահանում: Համագործակցություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:<br>2. Ռուսերեն (այլ օտար լեզու): Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:<br>3. Հայոց լեզու: Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:<br>4. Ես և շրջակա աշխարհը: Բնագիտություն, Աշխարհագրություն: Երկրակեղևի կառուցվածքը: Երկրաշարժեր, սողանքներ, քարաթափումներ: Բնական ռեսուրսներ: Մթնոլորտային տեղումներ. սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձնահյուսեր:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ3, Հ12, Հ13, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 8.3</td></tr>
<tr><td colspan="2">ԿԵՆՍԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ: ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Ռուցանել արտակարգ իրավիճակներում օրգանիզմի համար անհրաժեշտ ջերմության պահպանումը ՝ չմրսելու, չցրտահարվելու և արդյունավետ գործելու համար:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1.Արտակարգ իրավիճակում փոքրացնի մարմնի ջերմության կորուստը:<br>2.Ստանա կրակ և պահպանում այն:<br>3.Գիտի բնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները:<br>4.Գիտի հակահրդեհային անվտանգության կանոնները և իրականացնի համապատասխան միջոցառումներ:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2">Նախապատրաստական աշխատանքներ: Ջերմության կորստի սահմանափակում: Ջերմության ստացում շարժողական վարժությունների, շփումների միջոցով, հատուկ սննդի օգնությամբ և կրակից: Կրակի ստացումը: Անվտանգության միջոցառումներ:</td></tr>
<tr><td>Առաջարկվող գործունեության ձևեր</td><td>Խաչվող հասկացություններ</td></tr>
<tr><td>Կիրառում են անվտանգության ապահովումը տեղանքում կրակի ժամանակ:</td><td>Պատճառ և հետևանք<br>Կենսաապահովում: Համալիր մոտեցում:<br>Կրակ: Անվտանգություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Բնագիտություն, Աշխարհագրություն: Մթնոլորտային տեղումներ. սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձյունահյուսեր: Անվտանգությունը:<br>2. Ֆիզիկա: Ջերմություն, ջերմության կորուստ: Շփման ջերմություն: Ջերմակայունություն: Ջերմամեկուսիչ նյութեր:<br>3. Կենսաբանություն: Մրսածություն, ցրտահարություն: Այրվածքներ: Անվտանգության միջոցառումները:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Հ33, Հ46, Հ47, Հ50</td></tr>
<tr><td colspan="2">ԹԵՄԱ 9.1</td></tr>
<tr><td colspan="2">ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ծանոթացնել՝<br>1) առաջին օգնության (ԱՕ) խնդիրները,<br>2) առաջին օգնություն ցուցաբերողի իրավունքները և պարտականությունները,<br>2. Ուսուցանել՝<br>1) դեպքի վայրի գնահատումը:<br>2) տուժածի զննումը, վիճակի գնահատումը, տարածքից դուրսբերումը և տեղափոխումը:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքներ</td></tr>
<tr><td colspan="2">1.Ներկայացնի առաջին օգնության նպատակները, խնդիրներն:<br>2.Գնահատի դեպքի վայրը:<br>3.Իրականացնի տուժածի զննումը, վիճակի գնահատումը, առաջին օգնության ցուցաբերումը և տեղափոխումը:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակություն</td></tr>
<tr><td colspan="2">Առաջին օգնության (ԱՕ) նպատակը, խնդիրները: ԱՕ ցուցաբերողի պարտականությունները: Անվտանգության ապահովումը: Տուժածի առաջնային և երկրորդային զննումը:</td></tr>
</table>

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. Իրականացնում են պայմանական տուժածի զննում.<br>1) գիտակցություն,<br>2) սրտի աշխատանք,<br>3) մարմնի ջերմաստիճանի ստուգում: | **1. Օրինաչափություն**<br>1) Տարատեսակ իրավիճակներ /գիտակցության կորուստ, սրտի աշխատանք, մարմնի ջերմաստիճան/:<br>**2. Պատճառ և հետևանք**<br>1) Տուժած: Վնասվածքներ: Առաջին գնության ցուցաբերում: |

| **Միջառարկայական կապեր** |
|---|
| 1. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2. **Կենսաբանություն:** Գիտակցություն, ճնշում, սրտի աշխատանք, մարմնի նորմալ ջերմություն: Վնասվածքներ և վերքեր: Արյունահոսություն: Այրվածքներ: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ40, Հ41, Հ50 |
| **ԹԵՄԱ 9.2** |
| **ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ** |
| **Հիմնական նպատակը** |
| Ծանոթացնել վարակիչ հիվանդությունների կանխարգելումը դաշտային պայմաններում՝ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1.*Նկարագրի* սուր-վարակիչ հիվանդությունները:<br>2.*Գիտի* դաշտային պայմաններում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով կիրառվող սանիտարահիգենիկ կանոնները:<br>3.Պարզագույն իրավիճակներում *ցուցաբերի* առաջին օգնություն: |
| **Բովանդակություն** |
| Սանիտարահիգենիկ կանոնների պահպանումը դաշտային պայմաններում: |

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. Մանրէազերծված բինտից կամ թանզիֆից (մառլյայից) պատրաստում են շնչառական դիմակ: | **1. Օրինաչափություն**<br>1) Վարակիչ հիվանդություններ: |

<table>
<tr><td>2. Կատարում են էլաստիկ (առաձգական) վիրակապ և թանզիֆային (փաթույթային) վիրակապ:</td><td>2) Սանիտարահիգիենիկ կանոններ:<br>2. Պատճառ և հետևանք<br>1) Մանրէներ:Տուժած: Կանխարգելում:<br>2) Առաջին զնության ցուցաբերում:</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հայոց լեզու: Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2. Կենսաբանություն: Վարակիչ հիվանդություններ: Հարուցիչներ: Կանխարգելումը:</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Հ40, Հ41, Հ50</td></tr>
<tr><td colspan="2" align="center">ԹԵՄԱ 9.3</td></tr>
<tr><td colspan="2" align="center">ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՎՐԱ</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Հիմնական նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">1. Ձևավորել պատկերացումներ՝<br>1) արտաքին ազդակներից առաջացած վիճակների,<br>2) մարմնի ջերմակարգավորման մեխանիզմների վրա ազդող գործոնների,<br>3) տարբեր աստիճանի այրվածքների նշանների և այրվածքի մակերեսի որոշման կանոնների; այրվածքային հիվանդության և այրվածքային շոկի,<br>4) ցրտահարության մեխանիզմի և այրվածքներից բնորոշ տարբերությունների վերաբերյալ:<br>2. Ծանոթացնել՝<br>1) Քիմիական նյութերից առաջացած այրվածքները, առաջացման մեխանիզմը ըստ քիմիական նյութերի: Ծանրության աստիճանները, բնորոշ նշանները, առաջին օգնության ցուցաբերման գործողությունները, վնասված հյուսվածքի առաջնային մշակումը, վնասող ազդակի ազդեցության վերացման եղանակները, անվտանգության ապահովումը և կանխարգելումը:<br>2) Մարդու մարմնով էլեկտրական հոսանքի անցման մեխանիզմները: Էլեկտրական հոսանքի և կայծակի տեղային և ընդհանուր ազդեցությունը օրգանիզմի վրա: Առաջին օգնության ծավալը և կազմակերպումը էլեկտրավնասվածքների և կայծակնահարման ժամանակ:<br>3) Ջրահեղձման տեսակները, նշանները, առաջին օգնությունը: Իսկական և կեղծ, կապույտ և սպիտակ ջրահեղձման նշանները, թոքի այտուցի առաջացման մեխանիզմը և նախանշանները: Ջրահեղձման ժամանակ վերակենդանացման յուրահատկությունները: Ջրում տեղի ունեցող դժբախտ պատահարի կանխման  կանոնները:</td></tr>
</table>

| Վերջնարդյունքներ | |
|---|---|
| 1.*Ցուցաբերի* առաջին օգնություն արտաքին ազդակներից առաջացած վիճակներում:<br>2.*Մշակի* այրված մակերեսը առանց մաշկը վնասելու:<br>3.*Ցուցաբերի* առաջին օգնություն ՝ կախված այրվածքի (ցրտահարության) աստիճանից:<br>4.*Գիտի* արևահարությունից պաշտպանվելու ձևերն ու միջոցները, հատկապես' սարերում:<br>5.*Գիտի* ցրտահարությունից պաշտպանվելու ձևերն ու միջոցները, *կատարի* նախապատրաստական աշխատանքները վատ եղանակին և սարերում:<br>6.*Տեսակավորի, ցուցաբերի* առաջին օգնություն և *տարահանի* հոսանքահարված, կայծակնահարված տուժածներին:<br>6.*Տիրապետի* ինքնուրույն փրկվելու և տուժածին փրկելու հմտություններին:<br>7.*Ցուցաբերի* առաջին օգնություն ջրահեղձման դեպքում: | |
| **Բովանդակություն** | |
| 1.Բարձր և ցածր ջերմաստիճանների ազդեցությունը օրգանիզմի վրա:<br>2.Ջրահեղձում, հոսանքահարում, կայծակնահարում, քիմիական այրվածքներ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. Դիտում են տեսաֆիլմեր և կատարում քննարկում:<br>2. Ցուցաբերում են առաջին օգնություն քիմիական նյութերից այրվածքներով, հոսանքահարված, կայծակնահարված և ջրահեղձ եղած պայմանական տուժածներին: | **1. Օրինաչափություն**<br>1) Արտաքին ազդակներ:<br>**2. Պատճառ և հետևանք**<br>1) Բարձր և ցածր ջերմաստիճաններ:<br>2) Ջրահեղձում, հոսանքահարում, կայծակնահարում, քիմիական այրվածքներ: Տուժած:<br>3) Առաջին զնության ցուցաբերում: |
| **Միջառարկայական կապեր** | |
| 1. **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների  հայերեն համարժեքներ:<br>2. **Ֆիզիկա:** Էլեկտրական հոսանք:<br>3. **Քիմիա:** Քիմիական ակտիվ, թունավոր նյութեր, քլոր: Ծանր մետաղներ:<br>4. **Կենսաբանություն:** Քիմիական և ջերմային այրվածքներ: | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչի հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Հ40, Հ41, Հ50 | |

**11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

| **ԹԵՄԱ 1.1** |
|---|
| **ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ** |
| **Հիմնական նպատակը** |
| 1. Ծանոթացնել.<br>1) 2-րդ աշխարհամարտին հայերի մասնակցությունը,<br>2) հայկական դիվիզիաների անցած փառապանծ ուղին,<br>3) հայ անվանի զորահրամանատարների գործունեությանը:<br>2. Ներկայացնել Արցախյան ազատամարտի կարևոր մարտական գործողությունները:<br>3. Ծանոթացնել Արցախյան ազատամարտում մեծ ներդրում ունեցող ռազմական գործիչների գործունեությանը:<br>4. Ձևավորել հայրենասիրական աշխարհայցք: |
| **Վերջնարդյունքներ** |
